

**ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/10

1 հուլիսի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արմեն Քալաջյանի 04.06.2014 թ-ի դիմումով բերված գանգատը սոցիալական ապահովության վճարի գծով առաջադրված պարտավորության դեմ:

Ա/Ձ Արմեն Քալաջյանի գանգատում բերված փաստարկները.

Արմենի ՏՀՏ կողմից Ա/Ձ Արմեն Քալաջյանին հետ են վերադարձվել ապրիլ-հունիս և հուլիս-սեպտեմբեր եռամսյակների համար ներկայացված արտոնագրերի դիմումները, պարունակության թերթիկների բացակայության պատճառաբանությամբ: Արդյունքում, այդ վեց ամիսների համար հաշվարկվել է սուցիալական վճար՝ գումարով 30.000 դրամ:

Ա/Ձ Արմեն Քալաջյանը խնդրում է թույլ տալ ներկայացնել արտոնագրային վճարի հաշվետվությունները և ազատել սոցիալական վճարների գծով հաշվարկված պարտավորություններից, քանի որ երկրորդ հավելվածի՝ համաձայն հրաժարվել է սոցիալական վճարների վճարումից:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Արմեն Քալաջյանը պետական ռեսուրսներում հաշվառվել է 19.04.2012 թ-ին և ստացել է պետական գրանցման վկայական:

31.04.2012 թ-ին և 31.07.2012 թ-ին Ա/Ձ Արմեն Քալաջյանի կողմից փոստային ծառայության միջոցով Կոտայքի ՏՀՏ են ուղարկվել համապատասխանաբար ապրիլ-հունիս և հուլիս-սեպտեմբեր ամիսների համար մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու նպատակով արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարություններ: Քանի որ, դիմում-հայտարարությունները ներկայացվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի հավելված 3-ի 6-րդ կետի պահանջների խախտմամբ, այն է՝ բացակայել են պարունակության թերթիկները, դրանք փոստային ծառայության միջոցով ետ են վերադարձվել հարկ վճարողին: Արդյունքում, ապրիլ-սեպտեմբեր ամիսների համար «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն հաշվարկվել է նվազագույն սոցիալական վճար՝ ընդամենը 30.000 դրամ: Միևնույն ժամանակ, Ա/Ձ Արմեն Քալաջյանի կողմից 31.10.2012 թ-ին փոստային ծառայության միջոցով Կոտայքի ՏՀՏ է ուղարկվել հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար դիմում-հայտարարություն առ այն, որ հրաժարվում է սոցիալական ապահովության վճարները վճարելուց: Արդյունքում, «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն նվազագույն սոցիալական

ապահովության վճարի գումարներ հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար չեն հաշվարկվել:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի Հավելված 8-ի 6-րդ կետի. «Հայտարարություն ներկայացնելու օրն անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը ստանում է արտոնագիր սույն հավելվածի N 2 ձևին համապատասխան: Ընդ որում, հայտարարությունը ներկայացնելու օրվա ընթացքում սույն հավելվածի N 2 ձևով արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված հայտարարությունը ներկայացնելու օրը, եթե անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը, սույն հավելվածի 16-րդ կետին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում»:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Արմեն Քալաջյանի կողմից փոստային ծառայության միջոցով Կոտայքի ՏՀՏ են ուղարկվել հաշվետու ժամանակաշրջանների համար մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու նպատակով արտոնագրային վճար վճարող համարվելու դիմում-հայտարարությունները, ինչպես նաև մինչև արտոնագրերի ստանալը վճարվել են արտոնագրային վճարի գումարները: Սակայն, պարունակության թերթիկների բացակայության պատճառով Կոտայքի ՏՀՏ կողմից դիմում-հայտարարությունները փոստային ծառայության միջոցով ետ են վերադարձվել:

Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովը գտնում է, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ըստ էության, «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված արտոնագիր ստանալու ընթացակարգը Ա/Ձ Արմեն Քալաջյանի կողմից պահպանվել է: Այսինքն, «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով Ա/Ձ Արմեն Քալաջյանի վրա դրված պարտականությունները բովանդակային առումով վերջինիս կողմից կատարվել են:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Վ Է՝

Ա/Ձ Արմեն Քալաջյանի 04.06.2014 թ-ի դիմումով բերված գանգառը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ